



<<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների
իրականացումը մաթեմատիկա առարկայի դասավանդման
ընթացքում՝ ֆինանսական գիտելիքները ամրապնդելու մեջ
Առարկան՝ մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Համբարձումյան

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Արարատի մարզի
Նորաշենի Ավետիք Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1....
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....	3..
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	
ՀԱՎԵԼԱԾ 1.....	
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մաթեմատիկական պետք է սիրել թեկուզ նրա համար, որ կարգի է բերում մեր միտքը:

Մ.Վ.Լոմոնոսով

Մաթեմատիկական գիտությունների զարգացման հիմքն է, առանց որի անհնար կլինի ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և գիտության տարբեր բնագավառների զարգացումը:

Մաթեմատիկական մեր շրջապատող աշխարհը ճանաչելու հիմնաքարն է: Այն ճշգրիտ գիտություն է, որը կյանքի է կոչում զանազան ծրագրեր:

Մաթեմատիկական հաշվարկներն տեսնում ենք ամենուր, առանց որի անհնար կլինեք տիեզերանավերի ու ինքնաթիռների թռիչքը, մեքենաների ստեղծումը, բժշկական սարքերի օգտագործումը, դեղերի և բուժման բաշխումը, եղանակի կանխատեսումը, բիզնես ծրագրերի հաջողությունը, , հրաշակերտ շենքերի կառուցումը: նրա շնորհիվ է այսօրվա տեխնոլոգիական առաջընթացը, զարգացած քաղաքակրթությունը, մարդկության զարգացումը:

Իմ նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ:

Որի արդյունքում աշակերտները կկարողանան.

) անձնական և ընտանեկան բյուջեի արդյունավետ կառավարում,

բ) խնայողությունների կատարում և երկարաժամկետ պլանավորում,

գ) պարտքերի արդյունավետ կառավարում,

դ) արդյունավետ գնումների իրականացում. ֆինանսական ծառայություններից օգտվելիս տեղեկությունների հավաքագրում, համեմատում և պատասխանատու որոշումների կայացում,

ե) ֆինանսական համակարգում և շուկայում առաջարկվող ծառայություններից օգտվելու ռիսկերի գնահատում:

Մաթեմատիկան այն գիտությունն է, որը զարգացնում է մտքի արագությունը բարդ իրավիճակներում ճիշտ կողմնորոշումը, հաշվարկելով բոլոր հնարավոր հետևանքները: Մաթեմատիկան մեծ խթան է հանդիսանում երեխայի մտավոր զարգացման գործում: Այն մարզում է երեխայի ուղեղը, լավացնում հիշողությունը: Ոչ մի այլ առարկա այդքան չի օգնում երեխայի ճիշտ զարգացմանը, որքան մաթեմատիկան:

Այսօր առանց մաթեմատիկայի հնարավոր չէ մարդկության առաջընթացը: Մերմանենք սեր առարկայի նկատմամբ, նպաստենք երեխայի մտավոր ունակությունների զարգացմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաթեմատիկական կրթությունը ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ կրթության մաս է և հիմնարար դեր ունի բնագիտական, տեխնիկական գիտելիքների ձեռք բերման ու խորացման գործում: Մաթեմատիկական կրթությունը մարդու անհատականությունը, մտավոր ու ստեղծագործական պոտենցիալը ձևավորող կարևոր միջոց է: Մարդկային գործունեության ցանկացած ոլորտում, ի լրումն հատուկ գիտելիքների, անհրաժեշտ են նաև տրամաբանորեն մտածելու կարողություն, փաստարկները ճիշտ և հետևողականորեն կառուցելու, մտքերը ճշգրիտ և պարզ արտահայտելու ունակություններ, իրավիճակը քննադատաբար գնահատելու, վերլուծելու, կարևորն ու երկրորդականը զանազանելու, անջատ փաստերը համադրելու, ընդհանրացումներ անելու հմտություններ: Բոլոր այդ կարողություններն ու հմտություններն առաջին հերթին և առավելապես ձևավորվում ու զարգանում են մաթեմատիկա ուսումնասիրելու միջոցով: Այսօր ուսուցիչներիս առջև խնդիր է դրված ուսումնական նյութը մատուցել առավել լավ մեթոդներով, որոնք աշակերտներին կներգրավեն ակտիվ ուսուցման մեջ: Մեր նպատակն է աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնել թեմայի նկատմամբ, զարգացնել ստեղծագործական, համագործակցային հմտությունները: Տոկոսի վերաբերյալ խնդիրների լուծման ճանապարհը հագեցած է խոչնդոտներով և հաղթահարելու համար պահանջվում է խելք և հնարամտություն: Իմ դասավանդման ընթացքում փորձել եմ ստեղծել հնարներ, որոնք ցրում են դժվարության հանդեպ ունեցած լարվածությունը, ապահովում դրական և արդյունավետ միջավայր:

Հետազոտման մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ: Նախագծային մեթոդը հանդիսանում է հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն: Մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Հետազոտումները կարող են լինել անհատական ու խմբային: Ցանկացած հետազոտման հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ունեն առանձնահատկություններ: Գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում կիրառելու պատրաստակամություն: Մաթեմատիկայի դասընթացը նպաստավոր է սովորողի այնպիսի որակների ձևավորման համար, որոնց շնորհիվ նա կկարողանա իր գիտելիքներն ու հմտությունները օգտագործել, մասնավորապես, հետևյալ ուղղություններով՝

- ա) անձնական և ընտանեկան բյուջեի արդյունավետ կառավարում,
- բ) խնայողությունների կատարում և երկարաժամկետ պլանավորում,
- գ) պարտքերի արդյունավետ կառավարում,
- դ) արդյունավետ գնումների իրականացում. ֆինանսական ծառայություններից օգտվելիս տեղեկությունների հավաքագրում, համեմատում և պատասխանատու որոշումների կայացում,
- ե) ֆինանսական համակարգում և շուկայում առաջարկվող ծառայություններից օգտվելու ռիսկերի գնահատում:

Կրթության բովանդակության մեջ, ֆինանսական գիտելիքների ու հմտությունների հետ մեկտեղ, ներառվում են նաև արժեքները, որոնք դրսևորվում են վերաբերմունքի և վարքագծի միջոցով: Մաթեմատիկական համատեքստում կարող են ներկայացվել այնպիսի արժեքներ, ինչպես օրինակ՝

- փողի և անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ դրական վերաբերմունքը, սովորույթն ու մշակույթը,
- սեփական իրավունքների պաշտպանությունը՝ որպես սպառողի,
- կարիքների, պահանջների և հնարավորությունների ներդաշնակեցումը,
- զեղծարարությունից ու խարդախությունից խուսափումը և այլն:

Դասապրոցեսում, որևէ առարկայի նկատմամբ աշակերտների հետաքրքրության ձևավորումը, կայացումը և շարունակականությունը, հմուտ մանկավարժական գործողությունների միջոցով անընդհատ զարգանալով և ամրապնդվելով, դառնում է ուսման հանդեպ դրական վերաբերմունքի հիմքը, 6 ստեղծում է ուժեղ մոտիվացիոն դաշտ: Միաժամանակ, հարկավոր է նշել, որ հետաքրքրությունը կրում է որոնողական բնույթ: Դա նշանակում է, որ հետաքրքրության ազդեցության ներքո աշակերտը ձգտում է պատասխաններ փնտրել մշտապես առաջ եկող հարցերին, ընդ որում այդ գործընթացը կրում է բավականին ակտիվ բնույթ և ուղղեկցվում է մշտական ստեղծագործական աշխատանքով աշակերտի կողմից: Շատ կարևոր հատկանիշ է այն, որ հետաքրքրությամբ առաջնորդվող աշակերտը ցանկացած ուսումնական գործունեություն ծավալում է բարձր էմոցիոնալ ֆոնի վրա, ինչն էլ ավելի էնպաստում ուսումնական գործընթացի արդյունավետությանը: Կարևոր է այն հանգամանքը, որ ճանաչողական հետաքրքրությունը ոչ միայն բերում է ուսումնական գործընթացի արդյունավետությանը, այլև խթանում է երեխայի հոգեկան գործընթացների՝ հիշողության, մտածողության, երևակայության, ստեղծագործականության, բարեհաջողընթացքը: Ճանաչողական հետաքրքրությունը-աշակերտի ուսումնական մոտիվացիայի կարևորագույն աղբյուրն է: Այն շատ մեծ ազդեցություն է թողնում առհասարակ ճանաչողական գործընթացի վրա: Այդ իսկ պատճառով ուսման ընթացքում դասավանդվող առարկայի հանդեպ հետաքրքրության խթանումը աշակերտների մոտ հանդիսանում է մանկավարժի կարևորագույն խնդիրներից մեկը: Եվ մանկավարժը իր ձեռքի տակ

ունի համապատասխան մեթոդական և ուսումնական հնարքների մի ամբողջական բանակ՝ այդ խնդիրն իրագործելու համար: Տվյալ գործընթացի ճիշտմանկավարժական կազմակերպման և նպատակաուղղված դաստիարակչական գործունեության ծավալման ընթացքում այս հատկանիշը կարող է դառնալ աշակերտի անձի կայուն մասը՝ հետագայում ուժեղ կառուցողական ազդեցություն թողնելով նրա ուսումնական և ցանկացած այլ գործունեության արդյունավտության վրա: Ավանդական մանկավարժության մեջ գոյություն ունի մի դրույթ, ըստ որի «ուսուցչի մահացու մեղքն է ձանձրալի լինելը»: Այս պնդումը կարելի է մենկաբանել որպես ուսուցչի մանկավարժական գործունեության բնորոշում, ըստ որի ուսուցիչը ինքը պետք է կարողանա բավականին գրավիչ և հետաքրքիր եղանակով մատուցել աշակերտներին ուսուցանվող նյութը՝ նրանցից համապատասխան արձագանքի արժանանալու համար: Աշակերտների մոտ գործնական աշխատանքով հետաքրքրության խթանումը իրականացվում է մի շարք կարևոր հանգամանքների հիման: Դրանցից առաջնայինը և հիմնականը հանդիսանում է դասի ժամանակ ուսուցչի կողմից համապատասխան իրավիճակների ստեղծումը, որոնց պարագայում աշակերտներին առաջարկվում են առաջադրանքներ, որոնք կապված են գործնական խնդիրների լուծման պատասխանների որոնման մտահանգումներ կատարելու հետ: Այսինքն, աշակերտների գործնական աշխատանքով հետաքրքրության խթանման գործում առաջին կարևոր նախապայմանն է համապատասխան իրավիճակի ստեղծումը, երբ աշակերտը պետք է դրսևորի իր մտածողության ունակություններն, ինքնուրույն աշխատանք կատարի՝ առաջադրված հարցերին պատասխանելու համար: Երկրորդ նախապայմանն է մանկավարժի կերպարը և նրա դասավանդման ոճը, ինչպես նաև նրա կողմից ընտրված դասավանդման մեթոդները և կիրառվող գործիքները: Հետագոտման մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար:

1. Որոնողական հետազոտական հմտություններ
2. Համագործակցային հմտություններ
3. Կառավարման կարողություններ, հմտություններ,
4. Ներկայացման հմտություններ:

Հետագոտման մեթոդը կարելի է առանձնացնել

5 փուլի՝

1. հիմնահարց
2. նախագծում
3. տեղեկատվության որոնում
4. նախապատրաստում
5. պրեզենտացիա

1-ին փուլ Հիմնահարց - Ուսուցիչը ներկայացնում է նախագծի թեման առաջարկում է նախագծի 6 հիմնական պրոբլեմը, ձևակերպում նպատակներն ու խնդիրները: Աշակերտները իրականացնում են պրոբլեմի ընկալումը, իրադրության մեջ հարմարվելը, կոնկրետացնում նպատակներն ու խնդիրները:

2-րդ փուլ Նախագծում - Ուսուցիչը կազմակերպում է նախագծի գործունեությունը, առաջարկում է կազմավորել խմբեր, բաշխել աշակերտների դերերը խմբերում, պլանավորել նախագծի գործունեությունը և պրեզենտացիայի հնարավոր ձևերը: Աշակերտները իրականացնում են խմբերի բաժանումը, բաշխում են դերերը խմբում, պլանավորում աշխատանքը, ընտրում արդյունքների և պրեզենտացիայի ձևերն ու եղանակները:

3-րդ փուլ Տեղեկատվության որոնում - Ուսուցիչը տեղեկատվության որոնման գործին չի մասնակցում: Նա խորհրդատվություն է տրամադրում, հսկում է խմբերի աշխատանքը, տալիս նոր գիտելիք, կատարում պրեզենտացիայի փորձեր: Աշակերտներն աշխատում են ինքնուրույն, ակտիվ, յուրաքանչյուրն իր դերով, խրհրդակցում են իրար հետ, որոնում և նախապատրաստում են նյութեր պրեզենտացիայի համար:

4-րդ փուլ Նախապատրաստում - Ուսուցիչը կատարում է դիտումներ, անհրաժեշտության դեպքում աշակերտներին խորհուրդներ է տալիս, նախապատրաստում է նախագծի պաշտպանությանը: Աշակերտները կատարում են հետազոտություններ, վերլուծում են տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, փորձեր են անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը:

5-րդ փուլ Պրեզենտացիա - Ուսուցիչը լսում է, աշակերտներին հարցեր է ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է, գնահատում է նրանց կատարած աշխատանքի որակը և պրոբլեմի լուծման ինքնատիպությունը:

Աշակերտները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում են խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը: Հետազոտական մեթոդը համարվում է ամենահաճախակի կիրառվող ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներից մեկը: Ուսուցման այս եղանակը հնարավորություն է տալիս աշակերտին ինքնուրույնաբար սովորելու ստեղծագործելու, դրսևորվելու,

հետազոտություն կատարելու հմտություններ: Նախագծերը կարող են լինել անհատական, խմբային, թիմային: Խմբային և թիմային նախագծերի իրականացման ժամանակ ուսուցիչը բաշխում է պարտականությունները աշակերտների միջև և սահմանում յուրաքանչյուրի պատասխանատվությունը՝ ընդհանուր առմամբ նախագիծը կատարելու համար: Թիմային և խմբային նախագծի ընդհանուր գնահատական ձևավորվում է կատարողներից յուրաքանչյուրի գնահատականի ամփոփման վրա: Անհատական նախագծերն ընտրում են աշակերտները և հետազոտությունները կատարում կա՛մ ինքնուրույնաբար, կա՛մ ուսուցչի հետ համատեղ: Այս մեթոդը դիտարկվում է որպես աշակերտակենտրոն ուսուցման մի տարբերակ, որն էապես բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը և աշակերտների մոտիվացվածությունը:

Գործնական առաջադրանքները կարող են լինել ուսուցողական բնույթի որոնք կոչված են նպաստելու հենց դասի ընթացքում տեսական նյութի յուրացմանը: Դրանք առաջադրվում են դասարանի բոլոր աշակերտներին և ուսուցչի կողմից պարտադիր ուղղորդման կարիք են զգում: Դրանք գնահատման ենթակա չեն. • հաշվել պատկերի մակերեսը • ստուգել հավասար են արդյոք, պատկերների մակերեսները: Գործնական առաջադրանքները կարող են լինել տեսական գիտելիքը հիմնավորող և ամրապնդող: Այս խմբի մեջ կարելի է դասել բոլոր այն առաջադրանքները, որոնք կարող են նպաստել այս կամ այն տեսակի հմտության ձևավորմանը: 5-ից 6-րդ դասարաններում փորձում ենք իրականացնել ավելի պարզ տեսակի աշխատանքներ և աստիճանաբար անցում կատարել դեպի բարդերը: 8 Թվերի կիրառությունը առօրյայում. Հետազոտական աշխատանքը կարելի է կազմակերպել որպես թեմատիկ խմբային աշխատանք՝ «Թվերն առօրյայում» խորագրով: Դասարանը բաժանվում է 5 խմբի և յուրաքանչյուր խմբի առաջարկվում է որևէ թեմա (նախապես որոշ տվյալների շուրջ տեղեկություններ ստանալը կարելի է առաջարկել որպես տնային աշխատանք): Թեմայի օրինակներ. • թվերն առևտրում • թվերը մոտավոր հաշվարկներում • թվերը ընտանիքի կոմունալ ծախսերում • թվերը դպրոցական ուսումնական տարվա նախապատրաստվելու համար անհրաժեշտ գումարներ կատարելիս (գրենական պիտույքներ, դասագրքեր և այլ անհրաժեշտ պարագաներ): Հետազոտական բնույթի գործնական առաջադրանքները պահանջում են ինքնուրույն հետազոտության իրականացում, երևույթների կամ օբյեկտների հատկությունների, օրինաչափությունների, փոխադարձ կապերի բացահայտում և մաթեմատիկական հիմնավորում: գործնական աշխատանքը գնահատման ենթակա չէ, բայց սովորողները կարող են հավաքել կուտակային միավորներ, որոնց շնորհիվ կարող են հաջորդ գործնական պարապմունքներին գնահատվել: Հաջորդ գործնական աշխատանքը նախատեսված է կազմակերպել թեմայի դասավանդման ավարտին:

Մաթեմատիկայի դպրոցական դասընթացում ֆինանսական կրթության ինտեգրման հիմնական նպատակն է՝ նպաստել ֆինանսապես գրագետ անձի ձևավորմանը, անձ, ով ունի այնպիսի գիտելիքներ, հմտություններ և մշակույթ, որոնք

նրան հնարավորություն են տալիս լինել տեղեկացված, իր անձնական ֆինանսների վերաբերյալ կայացնել պատասխանատու որոշումներ, ձեռնարկել իրավիճակին համապատասխան ճիշտ գործողություններ:

Անձնական ֆինանսների վերաբերյալ որոշումներ կայացնելու և իրավիճակին համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար անձից պահանջվում է որոշակի ինքնավստահություն, իսկ վերջինս կարող է դրսևորվել միայն հիմնավոր հաշվարկների ու համակողմանի վերլուծությունների առկայության դեպքում: Եվ հենց դա է հանգուցային այն խնդիրը, որի շուրջ միավորվում են մաթեմատիկական և ֆինանսական կրթությունները:

Մաթեմատիկական կրթության բովանդակության մեջ ֆինանսական բովանդակությամբ հարցերի ներառումը նպատակ ունի, մյուս կողմից, բարենպաստ ներգործություն ունենալ «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի կրթական խնդիրների արդյունավետ լուծման վրա: Մաթեմատիկական գրագիտություն ունենալու առանցքային (համապիտանի) կոմպետենցիան ենթադրում է կյանքի տարբեր իրադրություններ ներկայացնող համատեքստում մաթեմատիկական գիտելիքներ ու մեթոդներ կիրառելու կարողություն:

Արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր անձ առօրյայում և կենսագործունեության տարբեր ոլորտներում շարունակ առնչվում է ֆինանսական խնդիրների, որոնց թվում առավել մեծ կենսական նշանակություն ունեն հատկապես անձնական ֆինանսների կառավարմանը վերաբերող խնդիրները:

Գործնական աշխատանքներ իրականացվում են ուսումնական բոլոր

առարկաներից եւ ուսուցման գործընթացի բոլոր փուլերում՝

պայմանավորված յուրաքանչյուր առարկայի առանձնահատկություններով:

Գործնական աշխատանքը պետք է համապատասխանի ուսումնական

ծրագրով նախատեսված վերջնարդյունքներին, առաջադրանքը՝

նպաստի կարողունակությունների զարգացմանը:

Գործնական աշխատանքները կատարվում են դասարանում, տանը, համայնքում...

Արդյունքները կարող են ներկայացվել բանավոր և գրավոր:

Սովորողները կարող են ձեռք բերել հետևյալ կարողությունները.

. կարողանա վերլուծել, մեկնաբանել և ներկայացնել երևույթների պատճառահետևանքային կապերը,

. կարողանա վերլուծություններ կատարելով՝ կառուցի մաթեմատիկական մոդելներ, գրաֆիկներ, գծապատկերներ,

. ունենա կիրառական խնդիրներ լուծելու կարողություն,

. տիրապետի գիտական ճանաչողության մեթոդներին, կարողանա մոդելա-

վորել, վարկածներ առաջադրել և փորձնական ճանապարհով ստուգել, ստացված արդյունքներն ընդհանրացնել, կատարել եզրահանգումներ և կանխատեսումներ:

- . վերլուծաբար կարդալու կարողություն,
- . պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողություն,
- . ուշադրությունը կենտրոնացնելու կարողություն,
- . կարևորը երկրորդականից տարբերելու կարողություն,
- . կարդացածը գծապատկերների միջոցով ներկայացնելու կարողություն,
- . ինքնուրույն աշխատելու կարողություն,

. ինքնաստուգում իրականացնելու կարողություն: Խնդիրը լուծող սովորողը պարբերաբար և գիտակցաբար անդրադարձ է անում իր կատարած դատողություններին, դրանով իսկ պարզելով թե որտեղ արդյունավետ չեն եղել կատարված քայլերը, գիտակցաբար որոշում է կայացնում լուծման նոր ռազմավարություն ընտրելու, խնդիրը վերաիմաստավորելու, նոր տեղեկություններ փնտրելու վերաբերյալ: Սովորողի խնդիրների լուծման հմտություններն ավելի են զարգանում, երբ նա մտածում է առաջադրանքի կատարման այլ եղանակների մասին, նույնիսկ այն դեպքում, երբ նա խնդրի լուծումը հաջողությամբ է ավարտել:

Դասի նպատակները.

Գիտենա ֆինանսական բաղադրիչի հասկացությունները՝ բյուջե, տոկոս, շահույթ, եկամուտ, ծախս:

Հաղորդակցական՝ պայմաններ ստեղծել զույգերով, խմբերով աշխատելու կարողության ձևավորման համար. միմյանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորում. աշակերտներին կրթել փոխօգնության համար.

Կարգավորող՝ պայմաններ ստեղծել ուսումնական առաջադրանքի պլանավորման, անհրաժեշտ գործողությունների հաջորդականության կառուցման, դրանց գործունեության ճշգրտման համար:

Անձնական՝ պայմաններ ստեղծել հաշվողական հմտությունների, տրամաբանական մտածողության, մաթեմատիկայի նկատմամբ աշակերտների հետաքրքրության, ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, ինտելեկտուալ կարողությունների, նոր գիտելիքների և գործնական հմտությունների ձեռքբերման անկախության համար:

մաթեմատիկայի ուսուցման ընթացքում՝ ա) բարենպաստ իրադրություն է ստեղծվում բոլոր սովորողներին ուսումնական ակտիվ աշխատանքի մեջ ներգրավելու համար, բ)

տեսանելի և ընկալելի է դառնում մաթեմատիկական նյութի կիրառական նշանակությունը, զգալիորեն ուժեղանում են միջառարկայական կապերը, գ) նոր հնարավորություններ են ստեղծվում մաթեմատիկայի ուսուցման ընթացքում գործնական և հետազոտական աշխատանքների կատարման համար, դ) բարենպաստ պայմաններ են առաջանում ուսումնական այնպիսի աշխատանքների համար, որոնք ծառայում են սովորողների դաստիարակության և սոցիալական հմտությունների զարգացման նպատակին: Մաթեմատիկայի դասընթացը նպաստավոր է սովորողի այնպիսի որակների ձևավորման համար, որոնց շնորհիվ նա կկարողանա իր գիտելիքներն ու հմտությունները օգտագործել, մասնավորապես, հետևյալ ուղղություններով՝

ա) անձնական և ընտանեկան բյուջեի արդյունավետ կառավարում,

բ) խնայողությունների կատարում և երկարաժամկետ պլանավորում,

գ) պարտքերի արդյունավետ կառավարում,

դ) արդյունավետ գնումների իրականացում. ֆինանսական ծառայություններից օգտվելիս տեղեկությունների հավաքագրում, համեմատում և պատասխանատու որոշումների կայացում,

ե) ֆինանսական համակարգում և շուկայում առաջարկվող ծառայություններից օգտվելու ռիսկերի գնահատում:

Սովորողները կարող են ձեռք բերել հետևյալ կարողությունները .

. վերլուծաբար կարդալու կարողություն, . պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողություն,

. ուշադրությունը կենտրոնացնելու կարողություն,

. կարևորը երկրորդականից տարբերելու կարողություն,

. կարդացածը գծապատկերների միջոցով ներկայացնելու կարողություն,

. ինքնուրույն աշխատելու կարողություն,

. ինքնաստուգում իրականացնելու կարողություն:

Սեղանին դրված է ելքի քարտեր

1.Նշիր 3 բան, որ սովորեցի այսօր

2.Նշիր 2 բան, որ հետաքրքրեց ինձ

3.Նշիր 1 բան, որ մնաց անհասկանալի:

Բնության մեջ կա «տնտեսության օրենք», ըստ որի բնությունը միշտ «փնտրում է ամենակարճ ուղիները և ընտրում է տնտեսական լուծումներ (եվոլյուցիայի գործընթացի արդյունքում, բնական ընտրություն): Այս օրենքը դրսևորվում է կառուցվածքում. մակրոտիեզերքի և միկրոտիեզերքի կենսաբանական ձևերը: Այս ձևերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանց մեջ զարմանալի փոխհարաբերություն և կրկնություն կա նույն պարզ ձևերի, որոնք տարբեր համակցություններով կրկնվում են բարդ ձևերի հսկայական բազմազանությամբ:

Արժեքային համակարգ՝

1. Գիտակցի երևույթները գննելու, քննարկելու, վերլուծելու, տրամաբանական մտահանգումներ կատարելու, եզրահանգումներ կատարելու կարևորությունը:

2.Տարբեր իրավիճակներում գիտակցի սեփական քայլերը գնահատելու կարևորությունը, ցուցաբերի պարտաճանաչություն և պատասխանատվության բարձր զգացում գործի նկատմամբ:

3. Կարևորի նպատակապահությունը խնդիրներ լուծելիս, ունենա վստահություն սեփական ուժերի նկատմամբ, ցուցաբերի պատրաստակամություն և նախաձեռնություն:

4. Հարցեր քննարկելիս առաջնային համարի ստեղծագործական մոտեցումը, տարբեր պահերին արագ կողմնորոշվելու, հայտնաբերելու կարողություն դրսևորելու, հնարամտություն և մտքի ճկունություն ցուցաբերելու կարևորությունը:

5. Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:

6.Ցուցաբերի հարգանք ուսուցչի և դասընկերների հանդեպ, լինի կարգապահ ու հանդուրժող

ՀԱՐՑԵՐ ԱՆԴՐԱԴԱՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ դեր ունի տոկոսը խնայողությունների և պարտքերի համատեքստում:

2. Ի՞նչ անհրաժեշտ քայլեր պետք է արվեն պարտք վերցնելու և այն կառավարելու ժամանակ, որպեսզի չտուժեք:

3. Ձեր կարծիքով ինչու՞ է ապրանքի կամ ծառայության զեղչի/աճի դեպքում կիրառվում տոկոս և ո՞չ թե կոնկրետ ֆիքսված գումար:

4. Ձեռչերից օգտվելը ինչու՞ վ է շահավետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր անձ առօրյայում և կենսագործունեության տարբեր ոլորտներում շարունակ առնչվում է ֆինանսական խնդիրների հետ, որոնց թվում առավել մեծ կենսական նշանակություն ունեն հատկապես անձնական ֆինանսների կառավարմանը վերաբերող խնդիրները: Դրանք արդյունավետ լուծելու համար պահանջվում է ունենալ ֆինանսական ունակություններիբավարար մակարդակ, ինչը կարող է ձեռք բերվել միայն նպատակային կրթական ծրագրերի շնորհիվ: Ֆինանսական կրթության այն ծրագրերը, որոնք լինելով ողջ կյանքի ընթացքում անձի համար համապիտանի կարողությունների ձևավորման միջոց, վերաբերում են հանրության բոլոր անդամներին և աստիճանական զարգացում են ունենում որպես շարունակական գործընթաց: Այդ գործընթացի առանցքային և հիմնական օղակներից մեկը հանրակրթական դպրոցն է, որտեղ հնարավոր է անձի զարգացման վաղ տարիքից ներդնել անձնական ֆինանսները կառավարելու սովորույթ, այն դարձնել կենսակերպի անբաժանելի մաս և ձևավորել որպես մշակույթ:

Հանրակրթական ծրագրերի բովանդակության մեջ ֆինանսներին վերաբերող գիտելիքների ներառումը, իր հերթին, խթան կհանդիսանա նաև մեծահասակների (ուսուցիչների, ծնողների և այլն) ֆինանսական ունակություններիբարելավման համար, և արդյունքում բարենպաստ միջավայր կստեղծվի, որպեսզի հանրային կյանքում դրական վերաբերմունք ձևավորվի անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ:

Հանրակրթական դպրոցներում ֆինանսական կրթության իրականացման արդյունավետ ուղիներից մեկը միջառարկայական ինտեգրումն է, երբ ֆինանսներին վերաբերող բովանդակային նյութը ներառվում է գործող առարկաներից մի քանիսի ծրագրերում: Առանձնահատուկ հնարավորություններ ունի մաթեմատիկայի դպրոցական դասընթացը, քանի որ այն ունենալով շարունակական ընթացք (դասավանդվում է 1-12-րդ դասարաններում), բոլոր տարիքի սովորողների համար կարող է դիտարկել ֆինանսներին վերաբերող իրավիճակներ, հարցեր և խնդիրներ: Ընդ որում՝ այդպիսի ինտեգրումը բարենպաստ կլինի նաև հենց մաթեմատիկայի կրթական խնդիրների իրականացման առումով. Ֆինանսներին վերաբերող հարցերի շնորհիվ կապահովվի մաթեմատիկական կրթության բովանդակության կապը իրական կյանքի հետ, մաթեմատիկական վերացական հասկացություններն ու առնչությունները կփոխադրվեն կիրառական ոլորտ և այդպիսով կնպաստեն ուսումնական նյութի ընկալմանն ու սովորողների հետաքրքրասիրության բարձրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ:
2. www.aniedu.am
3. <https://old-lib.armedu.am/resource/26126>
4. <https://minfin.am/website/images/website/h.h.%20nerqin%20audit/IFRS%20Manual%20ARM.pdf>